**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ**
**ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՆՈՂ ԱՆՁ**

---

ք. Երևան 29.04.2021թ.

# Ո Ր Ո Շ Ո Ւ Մ
# ՀՀ ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՆՈՂ ԱՆՁԻ
# թիվ ՍՑ-LO-2021/84

Նախագահությամբ՝ ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձ Լ. Օհանյանի
Քարտուղարությամբ՝ Ռ. Մկրտչյանի

Պատվիրատու՝ «Ստանդարտացման և չափագիտության ազգային մարմին» ՓԲԸ
Մասնակից՝ «Մեդիսար» ՍՊԸ

Մասնակցությամբ՝
«Մեդիսար» ՍՊԸ-ի ներկայացուցիչ՝ Ա. Մարգարյանի

Գնման ընթացակարգի ծածկագիրը և առարկան՝
«ՍՉԱՄ-ՀՄԱԱՊՁԲ-21/2» ծածկագրով հրատապ մեկ անձից գնում կատարելու ընթացակարգ, լաբորատոր սարքավորումների ձեռքբերում

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձը (այսուհետ նաև՝ Բողոքներ քննող անձ)՝ ուսումնասիրելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության կողմից 30.03.2021թ.-ի թիվ 26/26-1/4633-2021 գրությամբ «Մեդիսար» ՍՊԸ-ին (այսուհետ նաև՝ Մասնակից) գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված ընթացակարգով ներկայացված հիմքերը,

# ՊԱՐԶԵՑ

## 1. Գործի նախապատմությունը

ՀՀ ֆինանսների նախարարությունը, «Ստանդարտացման և չափագիտության ազգային մարմին» ՓԲԸ-ի 23.03.2021թ.-ի թիվ ՍՉԱՄ-250 գրության հիման վրա, 30.03.2021թ.-ին «Մեդիսար» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնել է ընթացակարգ՝ Բողոքներ քննող անձին ներկայացնելով համապատասխան հիմքերը:

Բողոքներ քննող անձի գործը մակագրվել է 30.03.2021թ.-ին:

30.03.2021թ.-ին www.gnumner.am կայքում հրապարակված հայտարարությամբ գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված ընթացակարգը ընդունվել է վարույթ և տրվել է թիվ ՍՑ-ԼՕ-2021/84 համարի ծածկագիրը:

08.04.2021թ.-ին և 29.04.2021թ.-ին նշանակվել և հրավիրվել են նիստեր:

Գործի քննությունն ավարտվել է 08.04.2021թ.-ին և Բողոքներ քննող անձի որոշման հրապարակման օր է նշանակվել 29.04.2021թ.-ին:

## 2. «Ստանդարտացման և չափագիտության ազգային մարմին» ՓԲԸ-ի ներկայացրած փաստերը և դիրքորոշումը.

«Ստանդարտացման և չափագիտության ազգային մարմին» ՓԲԸ-ի 23.03.2021թ.-ի թիվ ՍՉԱՄ-250 գրությամբ դիմել է ՀՀ ֆինանսների նախարարությանը՝ հայտնելով հետևյալը.

*«Սույնով հայտնում ենք, որ «Ստանդարտացման և չափագիտության ազգային մարմին» ՓԲ ընկերության կարիքների համար լաբորատոր սարքերի ձեռքբերման համար հայտարարված թիվ ՍՉԱՄ-ՀՄԱՊՁԲ-21/2 ծածկագրով ընթացակարգին հայտ է ներկայացրել «Մեդիսար» ՍՊԸ-ն (այսուհետ՝ Ընկերություն), որի առաջարկվող ապրանքի ամբողջական նկարագրում (Հավելված 1.1) առկա է եղել անհամապատասխանություն վերոնշյալ հրավերով սահմանված ապրանքի տեխնիկական բնութագրի հետ և ՀՀ կառավարության 2017 թվականի մայիսի 04-ի N 526-Ն որոշման 41-րդ կետի համաձայն*

*«Մեդիսար» ՍՊԸ-ին տրվել է մեկ աշխատանքային օր անհամապատասխանության շտկման համար, որը Ընկերության կողմից չի իրականացվել:*

*Թիվ ՍՀԱՄ-ՀՄԱԱՊՁԲ-21/2 ծածկագրով գնահատող հանձնաժողովի որոշմամբ «Մեդիսար» ՍՊԸ-ի կողմից ներկայացված հայտը գնահատվել է անբավարար և մերժվել:»:*

Ելնելով վերոգրյալից և հիմք ընդունելով ՀՀ կառավարության 04.05.2017թ.-ի թիվ 526-Ն որոշմամբ հաստատված գնումների գործընթացի կազմակերպման կարգի 45-րդ կետի պահանջները, կից ներկայացվել է «ՍՀԱՄ-ՀՄԱԱՊՁԲ-21/2» ծածկագրով հայտարարված գնման ընթացակարգի շրջանակներում «Մեդիսար» ՍՊԸ-ի տվյալները՝ համապատասխան հիմքերով:

**3. <u>«Մեդիսար» ՍՊԸ-ի ներկայացրած փաստարկները և դիրքորոշումը</u>.**

Բողոքներ քննող անձը 31.03.2021թ.-ի գրությամբ դիմել է «Մեդիսար» ՍՊԸ-ին՝ հնարավորություն տալով ՀՀ ֆինանսների նախարարության կողմից 30.03.2021թ.-ի թիվ 26/26-1/4633-2021 գրությամբ նախաձեռնված ընթացակարգի վերաբերյալ ներկայացնել գրավոր կարծիք:

Մասնակիցը, ստանալով կարծիք հայտնելու վերաբերյալ գրությունը, ինչպես նաև ծանուցված լինելով հրավիրված նիստերի տեղի, օրվա և ժամի մասին, ներկայացել է 08.04.2021թ.-ին հրավիրված նիստին:

Մասնակիցը 08.04.2021թ.-ին ներկայացվելով ընթացակարգի վերաբերյալ գրավոր դիրքորոշում հայտնել է հետևյալը.

*«ՀՀ ֆինանսների նախարարությունը 30.03.2021թ. թիվ 26/26-1/4633-2021 գրությամբ «Մեդիսար» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնել է ընթացակարգ՝ ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձին (այսուհետ՝ Բողոքներ քննող անձ) ներկայացնելով համապատասխան հիմքեր: Մասնակիցը համարում է նախաձեռնած ընթացակարգը ոչ իրավաչափ, ակնհայտ անհիմն և ղեկավարվելով <Գնումների մասին> ՀՀ օրենքի (այսուհետև նաև՝ Օրենք) 6-րդ հոդվածի 2-րդ մասի պահանջնի, ներկայացնում ենք սույն դիրքորոշումը.*

*1. «Ստանդարտացման և չափագիտության ազգային մարմին» ՓԲԸ-ի (այսուհետև՝ Պատվիրատու) կազմակերպվել է ՍՀԱՄ-ՀՄԱԱՊՁԲ-21/2 ծածկագրով գնանշման հարցման*

*ընթացակարգ, որին մասնակցելու համար հայտ է ներկայացվել միայն «Մեդիսար» ՍՊԸ-ի կողմից:*

*2. Ընթացակարգը գնահատող հանձնաժողովի կողմից հայտերը բացվել են 10.03.2021թ.-ին:*

*3. Ընթացակարգը գնահատող հանձնաժողովի քարտուղարի կողմից միայն 12.03.2021թ.-ին է գրություն ուղարկվել «Մեդիսար» ՍՊԸ-ին՝ հայտում ներկայացված անհամապատասխանությունները 1 աշխատանքային օրվա ընթացքում շտկելու վերաբերյալ:*

*4. 15.03.2021թ.-ին «Մեդիսար» ՍՊԸ-ի կողմից ներկայացվել է գրություն ի հավաստիք այն փաստի, որ վերջինիս կողմից ներկայացված հայտում ամրագրված մոդելը համապատասխանում է Պատվիրատուի կողմից ներկայացված նպատակներին ծառայելու համար սահմանված տեխնիկական պայմաններին:*

*5. 10.03.2021թ.-ի թիվ 2 արձանագրությամբ 4.3 կետով արձանագրվել է, որ «Մեդիսար» ՍՊԸ-ի կողմից չի շտկվել անհամապատասխանությունը և վերջինիս հայտը գնահատվել է անբավարար և մերժվել:*

*6. 23.03.2021թ.-ին է միայն Պատվիրատուի կողմից գրություն ուղարկվել լիազոր մարմնին համապատասխան գործընթաց նախաձեռնելու մասին:*

*7. ՍՀԱՄ-ՀՄԱԱՊՁԲ-21/2 ծածկագրով գնման ընթացակարգի տեխնիկական պայմանը թերի էր եղել, որի ի հավաստիք է հանդիսանում այդ ընթացակարգը չկայացած հայտարարելուց անմիջապես հետո վկայակոչված ծածկագրում ամրագրված տեխնիկական պայմանների էական փոփոխությամբ նոր և թիվ ՍՀԱՄ-ՀՄԱԱՊՁԲ-21/4 գնման ընթացակարգի կազմակերպումը:*

*ՀՀ ֆինանսների նախարարության կողմից 30.03.2021թ. թիվ 26/26-1/4633-2021 գրությամբ «Մեդիսար» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված ընթացակարգ՝ ակնհայտ անհիմն է և ենթակա է մերժման հետևյալ հանգամանքներից ելնելով.*

*Գնումների մասին ՀՀ օրենքի ( այսուհետև՝ Օրենք) 6-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն գնումների գործընթացին մասնակցելու իրավունքից զրկված մասնակցի վերաբերյալ ունեցած տեղեկությունների հիման վրա լիազորված մարմինը ընթացակարգ է նախաձեռնում գնումների հետ կապված բողոքներ քննող անձի [հետ]՝ առանց վճարի: Տվյալ մասնակցի կարծիքը լսելուց հետո գնումների հետ կապված բողոքներ քննող անձը սույն օրենքի 50-րդ հոդվածի 6-րդ մասով սահմանված ժամկետում որոշում է կայացնում*

*մասնակցին սույն հոդվածով նախատեսված ցուցակում ընդգրկելու վերաբերյալ: Անձը նշված ցուցակում ընդգրկվում է երկու տարի ժամկետով:*

*Օրենքի 4-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրությունը բաղկացած է Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքից, սույն օրենքից և իրավական այլ ակտերից: Գնումների մասին իրավական այլ ակտերը հրապարակվում են նաև պաշտոնական տեղեկագրում:*

*ՀՀ կառավարության 04.05.2017թ. թիվ 526-Ն որոշմամբ հաստատված Գնումների գործընթացի կազմակերպման կարգի (այսուհետև՝ Կարգ) 41-րդ կետի համաձայն՝ եթե հայտերի բացման և գնահատման նիստի ընթացքում իրականացված գնահատման արդյունքում մասնակցի հայտում արձանագրվում են անհամապատասխանություններ՝ հրավերի պահանջների նկատմամբ ներառյալ այն դեպքերը, երբ հայտում ներառված՝ Հայաստանի Հանրապետության ռեզիդենտ հանդիսացող մասնակցի կողմից հաստատված փաստաթղթերը կամ դրանց մի մասը հաստատված չեն էլեկտրոնային թվային ստորագրությամբ, ապա հանձնաժողովը մեկ աշխատանքային օրով կասեցնում է նիստը, իսկ հանձնաժողովի քարտուղարը նույն օրը դրա մասին էլեկտրոնային եղանակով ծանուցում է մասնակցին՝ առաջարկելով մինչև կասեցման ժամկետի ավարտը շտկել անհամապատասխանությունը: Եթե անհամապատասխանությունն արձանագրվել է ՀՀ պետական եկամուտների կոմիտեից ստացված տեղեկատվության հիման վրա, ապա մասնակցին ուղարկվող ծանուցմանը կցվում է նաև կոմիտեից ստացված տեղեկատվության բնօրինակից սկանավորված տարբերակը: Մասնակցին ուղարկվող ծանուցման մեջ մանրամասն նկարագրվում են հայտնաբերված անհամապատասխանությունները:*

*Պատվիրատուի կողմից 10.03.2021թ.-ին թիվ 2 արձանագրությամբ արձանագրվել է, որ «Մեդիսար» ՍՊԸ-ի կողմից ներկայացված հայտում առկա են անհամապատասխանություններ, սակայն համապատասխան գրությունը անհամապա-տասխանությունները շտկելու ուղարկվել է ոչ թե Կարգով սահմանված ժամկետում, այլ միայն 12.03.2021թ.-ին:*

*Օրենքի 2-րդ հոդվածի 1-ին մասի 23-րդ կետի համաձայն՝ գնման գործընթաց՝ գնում կատարելու նպատակով գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ նախատեսված ընթացակարգերի, իրավունքների և պարտականությունների իրագործմանն ուղղված գործողությունների ամբողջություն է: Միաժամանակ կարգը հստակ կարգավորում է գնման գործընթացի մասնակիցների գործողությունների հաջորդականությունը՝ հստակ ժամկետներով:*

*Ավելին, համապատասխան ընթացակարգային ժամկետի սահմանումը չի կարող ինքնանպատակ լինել: Տվյալ ընթացակարգային ժամկետի սկիզբը իրավաստեղծ մարմինը կապել է որոշակի իրավաբանական նշանակություն ունեցող փաստի հետ, և հետևաբար ցանկացած ընթացակարգ, որը կնախաձեռնվի դեռևս տվյալ ընթացակարգային ժամկետի հոսքը պայմանավորող փաստի ի հայտ չեկած լինելու պայմաններում, ինքնին կազդի ամբողջ ընթացակարգի իրավաչափության վրա՝ անկախ այն հանգամանքից, թե հետագայում ընթացակարգը նախաձեռնելուց հետո ինչպիսի հանգամանքներ կարող են ի հայտ գալ:*

*Նորմատիվ ակտերի մասին ՀՀ օրենքի 41-րդ հոդվածի 1-ին մասով սահմանվում է, որ նորմատիվ իրավական ակտի նորմը մեկնաբանվում է՝ հաշվի առնելով նորմատիվ իրավական ակտն ընդունելիս այն ընդունող մարմնի նպատակը՝ ելնելով դրանում պարունակվող բառերի և արտահայտությունների տառացի նշանակությունից, ամբողջ հոդվածի, գլխի, բաժնի կարգավորման համատեքստից, այն նորմատիվ իրավական ակտի դրույթներից, ի կատարումն որի ընդունվել է այդ ակտը, տվյալ նորմատիվ իրավական ակտով սահմանված սկզբունքներից, իսկ այդպիսի սկզբունքներ սահմանված չլինելու դեպքում՝ տվյալ իրավահարաբերությունը կարգավորող իրավունքի ճյուղի սկզբունքներից:*

*Վերոգրյալ նորմերի վերլուծությունից ակնհայտ է, որ հայտերի բացման և գնահատման նիստի ընթացքում իրականացված գնահատման արդյունքում մասնակցի հայտում հրավերի պահանջների նկատմամբ անհամապատասխանություններ արձանագրվելու պարագայում հանձնաժողովի քարտուղարի համար սահմանված է էլեկտրոնային եղանակով նույն օրը դրա մասին մասնակցին ծանուցելու պարտականություն:*

*Ընդ որում՝ Կարգի 41-րդ կետով սահմանված դրույթները չպահպանելու դեպքում դրանք չեն ծառայի իրենց նպատակին, այլակերպ մեկնաբանման դեպքում կհանգեցնեն որևէ ողջամիտ իրավական փաստարկով չհիմնավորվող մեկնաբանության՝ հաշվի չառնելով այնդ ընդունող մարմնի նպատակը, նորմում պարունակվող բառերի և արտահայտությունների տառացի նշանակությունը:*

*Կարգի 45-րդ կետի համաձայն՝ Օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետով նախատեսված հիմքերն ի հայտ գալու օրվան հաջորդող հինգ աշխատանքային օրվա ընթացքում պատվիրատուն տվյալ մասնակցի տվյալները՝ համապատասխան հիմքերով, գրավոր ուղարկում է լիազորված մարմին, որը դրանք ստանալուն հաջորդող 5 աշխատանքային օրվա ընթացքում նախաձեռնում է տվյալ մասնակցին գնումների*

*գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու ընթացակարգ:*

*Թիվ 2 արձանագրությունը կազմվել է 10.03.2021թ.-ին, սակայն Պատվիրատուն լիազորված անձին համապատասխան ընթացակարգ նախաձեռնելու գրություն ուղարկել է միայն 23.03.2021թ.-ին:*

*Վերոգրյալ նորմերից և գործի փաստական հանգամանքներից ակնհայտ է, որ Պատվիրատուի կողմից խախտվել է Հրավերի 7.9, Կարգի 41-րդ, 45-րդ սահմանված իմպերատիվ դրույթները, այն է՝ Ընթացակարգը գնահատող հանձնաժողովը 10.03.2021թ.-ին թիվ թ արձանագրությամբ արձանագրած անհամապատասխանությունների շտկման վերաբերյալ ծանուցումը նույն օրը ուղարկելու փոխարեն ծանուցել է միայն 12.03.2021թ.-ին, ընթացակարգը նախաձեռնելու վերաբերյալ համապատասխան գրությունը ուղարկել է միայն 23.03.2021թ.-ին, որպիսի պայմաններում խախտվում է նաև իրավական որոշակիության սկզբունքը:*

*ՀՀ քաղաքացիական օրենսգրքի (այսուհետև՝ Օրենսգիրք) 417-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն պարտապանը պարտավորությունը չկատարելու և (կամ) անպատշաճ կատարելու համար պատասխանատու է մեղքի առկայության դեպքում, եթե այլ բան նախատեսված չէ օրենքով կամ պայմանագրով: Պարտապանը ճանաչվում է անմեղ, եթե ապացուցում է, որ ինքը պարտավորությունը պատշաճ կատարելու համար ձեռնարկել է իրենից կախված բոլոր միջոցները:*

*Օրենքի 13-րդ հոդվածի համաձայն՝*

*1. Գնման առարկայի բնութագրերը պետք է ամբողջությամբ և հստակ նկարագրեն ձեռք բերվող ապրանքի, աշխատանքի կամ ծառայության հատկանիշները, դրանց ձեռքբերման և վճարման պայմանները՝ բացառելով տարակերպ մեկնաբանությունը: Գնման առարկայի բնութագրերը, որոնք ներառում են նաև պայմանագրի գինը, ընդգրկվում են պայմանագրում:*

*2. Գնման առարկայի բնութագրերը՝*

*1) պետք է մրցակցության հավասար պայմաններ ապահովեն հնարավոր մասնակիցների համար.*

*2) չպետք է հանգեցնեն գնումների գործընթացում մրցակցության համար չհիմնավորված խոչընդոտների առաջացմանը.*

*3) պետք է լինեն օբյեկտիվորեն հիմնավորված և համարժեք լինեն այն կարիքին, որի բավարարման նպատակով կատարվում է տվյալ գնումը.*

*4) ներառում են գնման առարկայի մասնագրի, տեխնիկական տվյալների, իսկ աշխատանքների դեպքում՝ նաև աշխատանքների ծավալաթերթի, ժամանակացույցի և այլ ոչ գնային պայմանների ամբողջական և համարժեք նկարագրությունը:*

*3. Ելնելով գնման առարկայի առանձնահատկությունից՝ դրանց հատկանիշները հնարավորինս ներառում են ձեռք բերվող ապրանքի, աշխատանքի կամ ծառայության որակին, ստանդարտին, անվտանգությանը, պայմանական նշաններին, տերմինաբանությանը, փաթեթավորմանը, բեռնաթափմանը, չափին, նախագծերին, ինչպես նաև գնման առարկայի այլ հատկանիշներին վերաբերող պայմանների հստակ նկարագրությունը՝ հիմնված միջազգային ստանդարտների և Հայաստանի Հանրապետությունում գործող նորմատիվատեխնիկական փաստաթղթերի, ստանդարտների, իսկ դրանց բացակայության դեպքում՝ ժամանակավոր տեխնիկական պայմանների վրա:*

*4. Գնման առարկայի հատկանիշները կարող են սահմանվել նաև որպես կատարողականի կամ գործառութային (ֆունկցիոնալ) նկարագրեր, որոնք պետք է ներկայացվեն բավարար ճշգրտությամբ՝ հնարավորություն տալով մասնակիցներին և պատվիրատուին ճշգրիտ ընկալել պայմանագրի առարկան:*

*5. Գնման առարկայի հատկանիշները չպետք է պահանջ կամ հղում պարունակեն որևէ առևտրային նշանի, ֆիրմային անվանմանը, արտոնագրին, էսքիզին կամ մոդելին, ծագման երկրին կամ կոնկրետ աղբյուրին կամ արտադրողին, բացառությամբ այն դեպքերի, երբ անհնար է գնման առարկայի բնութագրումն առանց դրանց: Հղումներ օգտագործելու դեպքում հատկանիշների բնութագիրը պետք է պարունակի «կամ համարժեք» բառերը:*

*Սույն գործի փաստերից՝ գնման ընթացակարգի հայտարարության, տվյալ հրավերի և թիվ ՍՀԱՄ-ՀՄԱԱՊՁԲ-21/4 հրավերի ուսումնասիրությունների արդյունքում ակնհայտ է դառնում, որ թիվ ՍՀԱՄ-ՀՄԱԱՊՁԲ-21/2 ծածկագրով ընթացակարգի հրավերի թիվ է Հավելվածով՝ տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցով սահմանված պահանջները պետք է հնարավորություն տան մասնակիցներին ճշգրիտ ընկալել գնման առարկան, ապահովեն մրցակցության հավասար պայմաններ հնարավոր մասնակիցների համար, օբյեկտիվորեն հիմնավորված և համարժեք լինեն այն կարիքին, որի բավարարման նպատակով կատարվում է տվյալ գնումը: Ավելին, Ընթացակարգի գնման առարկային բնութագրերը ամբողջությամբ և հստակ պետք է նկարագրեին ձեռքբերվող ապրանքի հատկանիշները՝ բացառելով տարակերպ մեկնաբանությունը, հնարավոր մասնակիցների*

*համար պետք է ապահովեն մրցակցության հավասար պայմաններ, դրանով իսկ բացառելով գնումների գործընթացում մրցակցության համար չհիմնավորված խոչընդոտների առաջացումը: Ինչպես նաև բնութագիրն օբյեկտիվորեն հիմնավորված և համարժեք պետք է լինի այն կարիքին, որի բավարարման նպատակով հայտարարվել է Ընթացակարգը:*

*Պատվիրատուի կողմից որևէ պատասխան չէր ներկայացվել «Մեդիսար» ՍՊԸ-ի շտկումների վերաբերյալ ներկայացված գրությամբ հարցի վերաբերյալ, որը հավաստում է այն մասին, որ Պատվիրատուի կողմից ներկայացված տեխնիկական պայմանները թերի են, այդ չափորոշիչներին հստակ համապատասխանող առնվազն երկու արտադրողի բնութագրեր առկա չեն: Ավելին, Պատվիրատուի կողմից սույն ընթացակարգը չկայացած հայտարարելուց անմիջապես հետո, նոր թիվ ՍՀԱՄ-ՀՄԱԱՊՁԲ-21/4 ընթացակարգի ժամանակ տեխնիկական պայմանները և/կամ չափորոշիչները ենթարկվել են էական փոփոխությունների և/կամ խմբագրումների, որը լիովին հաստատում է մեր կողմից վկայակոչված այն հանգամանքը, որ Պատվիրատուի կողմից խախտվել է օրենքի 13-րդ հոդվածը:*

*Վկայակոչվածից ելնելով պարզ է, որ «Մեդիսար» ՍՊԸ-ի կողմից ստանձնած պարտավորությունները, եթե նույնից տեսականորեն համարենք, որ խախտվել են, ապա այդ խախտմանը նպաստել է ՍՀԱՄ-ՀՄԱԱՊՁԲ-21/2 ծածկագրով գնման ընթացակարգի հրավերում առկա թերությունը, այն է՝ ընթացակարգի հրավերի թիվ 1 Հավելվածի՝ տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցով թիվ 2-րդ չափաբաժնի մասով սահմանված պայմաններն ու պահանջները վերաբերում են գոյություն չունեցող մոդելի կամ միայն մեկ արտադրող ընկերության անվանումներին:*

*Այսպիսով, վերոհիշյալ փաստական հանգամանքների և իրավական նորմերից ակնհայտ է, որ «Մեդիսար» ՍՊԸ օրենքով սահմանված պարտավորությունների կատարման համար ձեռնարկել է իրենից կախված ողջամիտ ու բավարար միջոցներ՝ այդ պարտավորությունների պատշաճ կատարման համար, որն իր կամքից անկախ հանգամանքներով պայմանավորված (թիվ ՍՀԱՄ-ՀՄԱԱՊՁԲ-21/2 ծածկագրով ընթացակարգի թիվ 2-րդ չափաբաժնի մասով Պատվիրատուի կողմից Օրենքի 13-րդ հոդվածի պարտադիր պահանջների խախտմամբ պայմանավորված), հնարավոր չի եղել դրանք հասցնել իրենց տրամաբանական ավարտին, որպիսի պայմաններում բացակայում է ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 417-րդ հոդվածի 1-ին մասով սահմանված՝ վերջինիս մեղքի առկայությունը:*

*Ամփոփելով վերոգրյալը, գտնում ենք, որ Օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի ա ենթակետով նախատեսված պատասխանատվությունը չի կարող վրա հասնել և հանգեցնել Մեդիսար ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու:»:*

**4. <u>ՍՑ-LO-2021/84 ընթացակարգի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերը,</u>**

Սույն գործի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերի համաձայն՝

i. «Ստանդարտացման և չափագիտության ազգային մարմին» ՓԲԸ-ի կողմից (այսուհետ նաև՝ Պատվիրատու) կողմից լաբորատոր սարքավորումների ձեռքբերման նպատակով 05.03.2021թ.-ին հայտարարվել է «ՍՉԱՄ-ՀՄԱԱՊՁԲ-21/2» ծածկագրով հրատապ մեկ անձից գնում կատարելու ընթացակարգ (այսուհետ նաև՝ Ընթացակարգ):

ii. Ընթացակարգին մասնակցելու նպատակով հայտ է ներկայացրել միայն «Մեդիսար» ՍՊԸ-ն:

iii. Մասնակիցը մասնակցության հայտի թիվ 1 հավելվածով՝ գնման ընթացակարգին մասնակցելու դիմում-հայտարարությամբ, հայտարարել և հավաստել է, որ բավարարում է «ՍՉԱՄ-ՀՄԱԱՊՁԲ-21/2» ծածկագրով գնման ընթացակարգի հրավերով սահմանված մասնակցության իրավունքի պահանջներին և հրավերի պահանջներին համապատասխան ներկայացնում է հայտ:

iv. «Մեդիսար» ՍՊԸ-ն հայտի թիվ 1.1 հավելվածով՝ առաջարկվող ապրանքի ամբողջական նկարագրով չի նշել ապրանքային նշանը, իսկ խցիկի լայնքը նշել է առնվազն 350 մմ:

v. Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի (այսուհետ նաև՝ Հանձնաժողով) 10.03.2021թ.-ին կայացված նիստի թիվ 2 արձանագրության 4.1-րդ կետի համաձայն՝ «Մեդիսար» ՍՊԸ-ի կողմից ներկայացված հայտում առկա են անհամապատասխանություններ, մասնավորապես՝ 2-րդ չափաբաժնի մասով առաջարկվող ապրանքի ամբողջական նկարագրում (Հավելված 1.1) նշված չէ ապրանքային նշանը: Հրավերով ներկայացված տեխնիկական բնութագրում ձուլման վառարանի խցիկի լայնքը նշված է առնվազն 400մմ, իսկ մասնակցի կողմից ներրկայացված նկարագրում՝ առնվազն 350մմ: Մասնակցի կողմից նշված մակնիշի տեխնիկական բնութագրի ուսումնասիրությունից պարզ

է դառնում, որ այն նախատեսված չէ տիգելային հալեցման համար, անհրաժեշտ է, որ ներկայացվելիք վառարանը օգտագործման նպատակներում ունենա տիգելային հալեցման վերաբերյալ նշում:

vi. Հանձնաժողովը, ղեկավարվելով ՀՀ կառավարության 04.05.2017թ.-ի թիվ 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 41-րդ և հրավերի 7.9-րդ կետերով, որոշել է մեկ /1/ աշխատանքային օրով կասեցնել հայտերի գնահատման նիստը և ծանուցել «Մեդիսար» ՍՊԸ-ին առաջարկելով շտկել արձանագրված անհամապատասխանությունները:

vii. Հանձնաժողովի քարտուղարի կողմից 12.03.2021թ.-ին armeps.am համակարգի ոչ ավտոմատ ծանուցման միջոցով անհամապատասխանությունների շտկման վերաբերյալ ծանուցում է ուղարկվել Մասնակցի sales@medisar.am էլ. փոստի հասցեին:

viii. 15.03.2021թ.-ին «Մեդիսար» ՍՊԸ-ն գրությամբ դիմել է Պատվիրատուին և տեղեկացրել է, որ Մասնակցի կողմից առաջարկված մոդելը լիովին համապատասխանում է ներկայացված տեխնիկական բնութագրին, ընդհանուր ծավալով ավելի մեծ է քան Պատվիրատուի կողմից պահանջվածը: Միակ անհամապատասխանությունը կայանում է լայնքի չափսերի մեջ՝ 5 սմ, որը կոմպեսացվում է խորության չափսերով: Միաժամանակ Մասնակիցը խնդրել է հնարավորության դեպքում ներկայացնել շուկայի ուսումնասիրության արդյունքում Պատվիրատուի կողմից պահանջված ապրանքի մոդելը:

ix. Արձանագրության 4.3-րդ կետի համաձայն՝ Հանձնաժողովը որոշել է Մասնակցի կողմից ներկայացված հայտը գնահատել անբավարար և մերժել, քանի որ «Մեդիսար» ՍՊԸ-ի կողմից շտկում չի իրականացվել:

x. Հայտերի բացման և գնահատման նիստը տեղի է ունեցել 10.03.2021թ.-ից մինչև 16.03.2021թ.-ը:

xi. Հանձնաժողովի նիստի թիվ 2 արձանագրությունը www.gnumner.am կայքում հրապարակվել է 17.03.2021թ.-ին:

xii. «Ստանդարտացման և չափագիտության ազգային մարմին» ՓԲԸ-ն Մասնակցի տվյալները՝ համապատասխան հիմքերով, ՀՀ ֆինանսների նախարարությանն է ներկայացրել 23.03.2021թ.-ի թիվ ՍՉԱՄ-250 գրությամբ:

## 5. <u>Բողոքներ քննող անձի հիմնավորումները և եզրահանգումը</u>.

Բողոքներ քննող անձը լրիվ, օբյեկտիվ և բազմակողմանի հետազոտելով և գնահատելով սույն գործում առկա ապացույցները, և համադրելով դրանք գործով պարզված փաստական հանգամանքների հետ, հանգում է այն եզրակացության, որ ՀՀ ֆինանսների նախարարության կողմից 30.03.2021թ.-ի թիվ 26/26-1/4633-2021 գրությամբ «Մեդիսար» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված ընթացակարգն ենթակա է մերժման, հետևյալ պատճառաբանությամբ.

«Գնումների մասին» ՀՀ օրենքի (այսուհետ նաև՝ Օրենք) 30-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ մասնակիցը հայտը ներկայացնում է հրավերով սահմանված կարգով: Հայտը ներառում է մասնակցի հաստատած՝

1) հրավերի պահանջներին իր տվյալների համապատասխանության մասին հայտարարությունը.

2) գնային առաջարկը.

3) ոչ գնային առաջարկը (տեխնիկական առաջարկ կամ տեխնիկական բնութագիր), եթե հրավերով նախատեսված է:

4) հրավերով նախատեսված այլ փաստաթղթեր (տեղեկություններ):

ՀՀ կառավարության 04.05.2017թ.-ի թիվ 526-Ն որոշմամբ (30.07.2020թ.-ի թիվ 1275 փոփոխություններով) հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի (այսուհետ նաև՝ Կարգ) 32-րդ կետի 1-ին ենթակետի «զ» պարբերության համաձայն՝ հրավերով նախատեսվում է նաև, որ մասնակիցը հայտով ներկայացնում է ապրանքների գնման դեպքում իր կողմից առաջարկվող ապրանքի տեխնիկական բնութագրերը, իսկ հրավերով նախատեսված դեպքերում նաև առաջարկվող ապրանքի ապրանքային նշանը, ֆիրմային անվանումը, մակնիշը և արտադրողի անվանումը (այսուհետ՝ ապրանքի ամբողջական նկարագիր):

Նույն կետի 21-րդ ենթակետի համաձայն՝ հայտերի գնահատումն իրականացվում է դրանց ներկայացման վերջնաժամկետը լրանալու օրվանից հաշված տասն աշխատանքային օրվա ընթացքում: Եթե գնման ընթացակարգի չափաբաժինների քանակը գերազանցում է յոթանասունհինգ չափաբաժինը, ապա հայտերի գնահատումն իրականացվում է դրանց ներկայացման վերջնաժամկետը լրանալու օրվանից հաշված տասնհինգ աշխատանքային օրվա ընթացքում:

Կարգի 40-րդ կետի 4-րդ ենթակետի համաձայն՝ հայտերի բացման և գնահատման նիստում հանձնաժողովը մերժում է այն հայտերը, որոնցում բացակայում է գնային

առաջարկը, կամ եթե այն ներկայացված է հրավերի պահանջներին անհամապատասխան, բացառությամբ սույն կարգի 41-րդ կետով նախատեսված դեպքի:

Կարգի 41-րդ կետի համաձայն՝ եթե հայտերի բացման և գնահատման նիստի ընթացքում իրականացված գնահատման արդյունքում մասնակցի հայտում արձանագրվում են անհամապատասխանություններ՝ հրավերի պահանջների նկատմամբ ներառյալ այն դեպքերը, երբ հայտում ներառված՝ Հայաստանի Հանրապետության ռեզիդենտ հանդիսացող մասնակցի կողմից հաստատված փաստաթղթերը կամ դրանց մի մասը հաստատված չեն էլեկտրոնային թվային ստորագրությամբ, ապա հանձնաժողովը մեկ աշխատանքային օրով կասեցնում է նիստը, իսկ հանձնաժողովի քարտուղարը նույն օրը դրա մասին էլեկտրոնային եղանակով ծանուցում է մասնակցին՝ առաջարկելով մինչև կասեցման ժամկետի ավարտը շտկել անհամապատասխանությունը:

Նույն Կարգի 42-րդ կետի համաձայն՝ եթե սույն կարգի 41-րդ կետով սահմանված ժամկետում մասնակիցը շտկում է արձանագրված անհամապատասխանությունը, ապա նրա հայտը գնահատվում է բավարար: Հակառակ դեպքում տվյալ մասնակցի հայտը գնահատվում է անբավարար և մերժվում է, ներառյալ եթե մասնակիցը սույն կարգի 32-րդ կետի 1-ին մասի «ե» պարբերությամբ սահմանված ժամկետում չի ներկայացնում հայտի ապահովման բնօրինակը, իսկ ընտրված մասնակից է ճանաչվում հաջորդող տեղ զբաղեցրած մասնակիցը:

Վերոգրյալ իրավակարգավորումների լույսի ներքո, Բողոքներ քննող անձը փաստում է, որ մասնակիցը ներկայացնում է հրավերով սահմանված կարգով հայտ, որը ներառում է մասնակցի կողմից ներկայացված դիմում-հայտարարությունը, առաջարկվող ապրանքի ամբողջական նկարագիրը, գնային առաջարկը, հրավերով նախատեսված այլ փաստաթղթեր (տեղեկություններ): Ընդ որում, Կարգի 41-րդ կետը ուղղակիորեն սահմանում է արձանագրված անհամապատասխանությունը շտկելու անթույլատրելիություն հայտում ներառվող միայն գնային առաջարկի համար, այն էլ՝ որոշ բացառություններով: Սույն կետի իմաստից բխում է, որ մնացած բոլոր դեպքերում հանձնաժողովը մեկ աշխատանքային օրով կասեցնում է նիստը, իսկ հանձնաժողովի քարտուղարը նույն օրը դրա մասին էլեկտրոնային եղանակով տեղեկացնում է մասնակցին՝ առաջարկելով մինչև կասեցման ժամկետի ավարտը շտկել անհամապատասխանությունը:

Հայտերի գնահատումն իրականացվում է հրավերով սահմանված կարգով և հրավերով նախատեսված պայմաններին չհամապատասխանող հայտերը գնահատվում են անբավարար և մերժվում են, ներառյալ եթե մասնակիցը մինչև հայտերի ներկայացման

վերջնաժամկետը լրանալուն հաջորդող աշխատանքային օրվա Երևանի ժամանակով 17:00-ն գնահատող հանձնաժողովին չի ներկայացնում հայտի ապահովման բնօրինակը:

Բողոքներ քննող անձը հարկ է համարում նշել, որ օրենսդիրն իմպերատիվ կերպով սահմանել է, որ եթե հայտերի բացման և գնահատման նիստի ընթացքում իրականացված գնահատման արդյունքում մասնակցի հայտում արձանագրվում են անհամապատասխանություններ՝ հրավերի պահանջների նկատմամբ, բացառությամբ այն դեպքերի երբ բացակայում է գնային առաջարկը կամ եթե վերջինս ներկայացված է հրավերի պահանջներին անհամապատասխան, ապա հանձնաժողովը մեկ աշխատանքային օրով կասեցնում է նիստը, իսկ հանձնաժողովի քարտուղարը նույն օրը դրա մասին էլեկտրոնային եղանակով ծանուցում է մասնակցին՝ առաջարկելով մինչև կասեցման ժամկետի ավարտը շտկել անհամապատասխանությունը:

Սույն գործի փաստերի համաձայն՝ «Ստանդարտացման և չափագիտության ազգային մարմին» ՓԲԸ-ի կողմից կողմից լաբորատոր սարքավորումների ձեռքբերման նպատակով 05.03.2021թ.-ին հայտարարված «ՍՉԱՄ-ՀՄԱԱՊՁԲ-21/2» ծածկագրով հրատապ մեկ անձից գնում կատարելու ընթացակարգին մասնակցելու նպատակով հայտ ներկայացրած «Մեդիսար» ՍՊԸ-ն հայտի թիվ 1.1 հավելվածով՝ առաջարկվող ապրանքի ամբողջական նկարագրով չի նշել ապրանքային նշանը, ինչպես նաև խցիկի լայնքը նշել է առնվազն 350 մմ, ինչով պայմանավորված Հանձնաժողովի 10.03.2021թ.-ին կայացված նիստի թիվ 2 արձանագրության 4.1-րդ կետով արձանագրվել է, որ «Մեդիսար» ՍՊԸ-ի կողմից ներկայացված հայտում առկա են անհամապատասխանություններ, մասնավորապես՝ 2-րդ չափաբաժնի մասով առաջարկվող ապրանքի ամբողջական նկարագրում (Հավելված 1.1) նշված չէ ապրանքային նշանը: Հրավերով ներկայացված տեխնիկական բնութագրում ձուլման վառարանի խցիկի լայնքը նշված է առնվազն 400մմ, իսկ մասնակցի կողմից ներրկայացված նկարագրում՝ առնվազն 350մմ: Մասնակցի կողմից նշված մակնիշի տեխնիկական բնութագրի ուսումնասիրությունից պարզ է դառնում, որ այն նախատեսված չէ տիգելային հալեցման համար, անհրաժեշտ է, որ ներկայացվելիք վառարանը օգտագործման նպատակներում ունենա տիգելային հալեցման վերաբերյալ նշում: Հանձնաժողովը, ղեկավարվելով ՀՀ կառավարության 04.05.2017թ.-ի թիվ 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 41-րդ և հրավերի 7.9-րդ կետերով, որոշել է մեկ /1/ աշխատանքային օրով կասեցնել հայտերի գնահատման նիստը և ծանուցել «Մեդիսար» ՍՊԸ-ին առաջարկելով շտկել արձանագրված անհամապատասխանությունները, ինչով պայմանավորված Հանձնաժողովի քարտուղարի

կողմից 12.03.2021թ.-ին armeps.am համակարգի ոչ ավտոմատ ծանուցման միջոցով անհամապատասխանությունների շտկման վերաբերյալ ծանուցում է ուղարկվել Մասնակցի sales@medisar.am էլ. փոստի հասցեին: Սակայն 15.03.2021թ.-ին «Մեդիսար» ՍՊԸ-ն գրությամբ դիմել է Պատվիրատուին և տեղեկացրել է, որ Մասնակցի կողմից առաջարկված մոդելը լիովին համապատասխանում է ներկայացված տեխնիկական բնութագրին, ընդհանուր ծավալով ավելի մեծ է քան Պատվիրատուի կողմից պահանջվածը: Միակ անհամապատասխանությունը կայանում է լայնքի չափսերի մեջ՝ 5 սմ, որը կոմպենսացվում է խորության չափսերով: Միաժամանակ Մասնակիցը խնդրել է հնարավորության դեպքում ներկայացնել շուկայի ուսումնասիրության արդյունքում Պատվիրատուի կողմից պահանջված ապրանքի մոդելը: Շարունակելով հայտերի գնահատումը և հիմք ընդունելով Մասնակցի կողմից ներկայացված գրությունը, Հանձնաժողովը որոշել է Մասնակցի կողմից ներկայացված հայտը գնահատել անբավարար և մերժել, քանի որ «Մեդիսար» ՍՊԸ-ի կողմից շտկում չի իրականացվել:

Օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ ենթակետի համաձայն՝ գնումների ընթացակարգերին մասնակցելու իրավունք չունեն այն անձինք՝ որոնք հայտը ներկայացնելու օրվա գրությամբ ներառված են գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում: Մասնակիցն ընդգրկվում է նշված ցուցակում, եթե՝

ա. խախտել է պայմանագրով նախատեսված կամ գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորությունը, որը հանգեցրել է պատվիրատուի կողմից պայմանագրի միակողմանի լուծմանը կամ գնման գործընթացին տվյալ մասնակցի հետագա մասնակցության դադարեցմանը,

բ. որպես ընտրված մասնակից հրաժարվել է պայմանագիր կնքելուց,

գ. հայտերը բացելուց հետո հրաժարվել է գնման գործընթացին հետագա մասնակցությունից:

Օրենքի 6-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ գնումների գործընթացին մասնակցելու իրավունքից զրկված մասնակցի վերաբերյալ ունեցած տեղեկությունների հիման վրա լիազորված մարմինը ընթացակարգ է նախաձեռնում: Տվյալ մասնակցի կարծիքը լսելուց հետո գնումների հետ կապված բողոքներ քննող անձը նույն օրենքի 50-րդ հոդվածի 6-րդ մասով սահմանված ժամկետում որոշում է կայացնում մասնակցին նույն հոդվածով նախատեսված ցուցակում ընդգրկելու վերաբերյալ: Անձը նշված ցուցակում ընդգրկվում է երկու տարի ժամկետով:

Կարգի 32-րդ կետի 19-րդ ենթակետի համաձայն՝ հրավերով նախատեսվում է նաև, որ եթե մասնակցի՝ հրավերով նախատեսված գնումներին մասնակցելու իրավունք ունենալու մասին հավաստումը որակվում է որպես իրականությանը չհամապատասխանող, կամ մասնակիցը հրավերով սահմանված կարգով և ժամկետներում չի ներկայացնում հրավերով նախատեսված փաստաթղթերը կամ ընտրված մասնակիցը չի ներկայացնում որակավորման ապահովումը, ապա այդ հանգամանքը համարվում է որպես գնման գործընթացի շրջանակում ստանձնված պարտավորության խախտում:

Կարգի 45-րդ կետի համաձայն՝ «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետով նախատեսված հիմքերն ի հայտ գալու օրվան հաջորդող հինգ աշխատանքային օրվա ընթացքում պատվիրատուն տվյալ մասնակցի տվյալները՝ համապատասխան հիմքերով, գրավոր ուղարկում է լիազորված մարմին, որը դրանք ստանալուն հաջորդող 5 աշխատանքային օրվա ընթացքում նախաձեռնում է տվյալ մասնակցին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու ընթացակարգ:

Նշված իրավանորմերի վերլուծությունից պետք է փաստել, որ օրենսդիրը մասնակցին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու համար նախատեսել է սպառիչ պայմաններ, որոնք են պայմանագրով նախատեսված կամ գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորությունների խախտումը, որը հանգեցրել է պատվիրատուի կողմից պայմանագրի միակողմանի լուծմանը կամ գնման գործընթացին տվյալ մասնակցի հետագա մասնակցության դադարեցմանը, որպես ընտրված մասնակից պայմանագիր կնքելուց հրաժարվելը և հայտերը բացելուց հետո գնման գործընթացին հետագա մասնակցությունից հրաժարվելը: Միայն սույն դեպքերում է հնարավոր մասնակցին ներառել գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում:

Բողոքներ քննող անձը փաստում է նաև, որ մասնակիցը պարտավոր է ներկայացնել հրավերով սահմանված պահանջներին համապատասխանող փաստաթղթեր (այսուհետ՝ Փաստաթղթեր): Եվ եթե Փաստաթղթերում արձանագրվում են անհամապատասխանություններ՝ հրավերի պահանջների նկատմամբ, իսկ մասնակիցը սահմանված ժամկետում չի շտկում արձանագրված անհամապատասխանությունները, ապա այդ հանգամանքը համարվում է որպես գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորության խախտում: Նման դեպքում առաջանում է «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի «ա» ենթակետի դրույթների կիրառման անխուսափելիությունը, քանի

որ Մասնակիցն իր գործողություններով կամ անգործությամբ, խախտելով գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորությունը, հանգեցնում է պատվիրատուի կողմից գնման գործընթացին տվյալ մասնակցի հետագա մասնակցության դադարեցմանը:

Սույն գործի փաստերի համաձայն՝ «Մեդիսար» ՍՊԸ-ն մասնակցության հայտի թիվ 1 հավելվածով՝ գնանշման հարցման ընթացակարգին մասնակցելու դիմում-հայտարարությամբ, հայտարարել և հավաստել է, որ բավարարում է «ՍՉԱՄ-ՀՄԱԱՊՁԲ-21/2» ծածկագրով գնման ընթացակարգի հրավերով սահմանված մասնակցության իրավունքի պահանջներին և հրավերի պահանջներին համապատասխան ներկայացնում է հայտ:

Վերոնշյալներով պայմանավորված՝ առաջանում է «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի «ա» ենթակետի դրույթների կիրառման անխուսափելիությունը, քանի որ Մասնակիցն իր գործողություններով կամ անգործությամբ, խախտելով գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորությունը, հանգեցրել է Պատվիրատուի կողմից գնման գործընթացին տվյալ մասնակցի հետագա մասնակցության դադարեցմանը, որպիսի պայմաններում Մասնակիցը պետք է ընդգրկվի գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում՝ 2 (երկու) տարի ժամկետով:

Այսպիսով, վերոհիշյալ փաստական հանգամանքների և իրավական նորմերի լույսի ներքո, դրանց համակարգված վերլուծության արդյունքում՝ Բողոքներ քննող անձը հանգում է այն եզրակացության, որ «Մեդիսար» ՍՊԸ-ն Պատվիրատուի կողմից սահմանված ժամանակահատվածում, չշտկելով արձանագրված անհամապատասխանությունները, խախտել է գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորությունը, որն էլ հանգեցրել է գնման գործընթացին տվյալ մասնակցի հետագա մասնակցության դադարեցմանը:

Անդրադառնալով Մասնակցի կողմից դիրքորոշմամբ նշված այն հանգամանքին, որ Պատվիրատուի կողմից 10.03.2021թ.-ի թիվ 2 արձանագրությամբ արձանագրվել է «Մեդիսար» ՍՊԸ-ի ներկայացրած հայտում առկա անհամապատասխանությունների մասին, սակայն համապատասխան շտկման մասին ծանուցումը ուղարկվել է ոչ թե Կարգի 41-րդ կետով սահմանված ժամկետում, այլ 12.03.2021թ.-ին, Բողոքներ քննող անձը փաստում է հետևյալը.

Կարգի 32-րդ կետի 21-րդ ենթակետի համաձայն՝ հայտերի գնահատումն իրականացվում է դրանց ներկայացման վերջնաժամկետը լրանալու օրվանից հաշված

տասն աշխատանքային օրվա ընթացքում: Եթե գնման ընթացակարգի չափաբաժինների քանակը գերազանցում է յոթանասունհինգ չափաբաժինը, ապա հայտերի գնահատումն իրականացվում է դրանց ներկայացման վերջնաժամկետը լրանալու օրվանից հաշված տասնհինգ աշխատանքային օրվա ընթացքում:

Կարգի 41-րդ կետի համաձայն՝ եթե հայտերի բացման և գնահատման նիստի ընթացքում իրականացված գնահատման արդյունքում մասնակցի հայտում արձանագրվում են անհամապատասխանություններ՝ հրավերի պահանջների նկատմամբ ներառյալ այն դեպքերը, երբ հայտում ներառված՝ Հայաստանի Հանրապետության ռեզիդենտ հանդիսացող մասնակցի կողմից հաստատված փաստաթղթերը կամ դրանց մի մասը հաստատված չեն էլեկտրոնային թվային ստորագրությամբ, ապա հանձնաժողովը մեկ աշխատանքային օրով կասեցնում է նիստը, իսկ հանձնաժողովի քարտուղարը նույն օրը դրա մասին էլեկտրոնային եղանակով ծանուցում է մասնակցին՝ առաջարկելով մինչև կասեցման ժամկետի ավարտը շտկել անհամապատասխանությունը:

Տվյալ պարագայում, Բողոքներ քննող անձն արձանագրում է, որ Հանձնաժողովի կողմից հայտերի բացումը և հայտերի գնահատումը կայացել է 10.03.2021թ.-ից մինչև 16.03.2021թ.-ը ընկած ժամանակահատվածում, ինչի արդյունքում Հանձնաժողովի քարտուղարի կողմից Մասնակցին անհամապատասխանությունների շտկման վերաբերյալ ծանուցում է ուղարկվել 12.03.2021թ.-ին՝ պահպանելով Կարգի 32-րդ կետի 21-րդ ենթակետով և Կարգի 41-րդ սահմանված պահանջները, այն է՝ հայտերի բացման և գնահատման նիստի ընթացքում՝ (տաս /10/ աշխատանքային օր) իրականացված գնահատման արդյունքում մասնակցի հայտում անհամապատասխանություններ արձանագրելու պարագայում Հանձնաժողովը մեկ աշխատանքային օրով կասեցրել է նիստը, իսկ Հանձնաժողովի քարտուղարը նույն օրը, 12.03.2021թ.-ին, դրա մասին էլեկտրոնային եղանակով ծանուցում է «Մեդիսար» ՍՊԸ-ին:

Անդրադառնալով «Մեդիսար» ՍՊԸ-ի կողմից դիրքորոշմամբ նշված մեկ այլ հիմավորմանը, համաձայն որի՝ Մասնակցին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ընթացակարգ նախաձեռնելու հիմքերն ի հայտ են եկել 10.03.2021թ.-ին, սակայն գրությունը ուղարկվել է ՀՀ ֆինանսների նախարարություն միայն 23.03.2021թ.-ին՝ չպահպանելով Կարգի 45-րդ կետով սահմանված 5-օրյա ժամկետը, ապա Բողոքնոր քննող անձը փաստում է հետևյալը.

«Նորմատիվ իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 41-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ նորմատիվ իրավական ակտի նորմը մեկնաբանվում է՝ հաշվի առնելով

նորմատիվ իրավական ակտն ընդունելիս այն ընդունող մարմնի նպատակը՝ ելնելով դրանում պարունակվող բառերի և արտահայտությունների տառացի նշանակությունից, ամբողջ հոդվածի, գլխի, բաժնի կարգավորման համատեքստից, այն նորմատիվ իրավական ակտի դրույթներից, ի կատարումն որի ընդունվել է այդ ակտը, տվյալ նորմատիվ իրավական ակտով սահմանված սկզբունքներից, իսկ այդպիսի սկզբունքներ սահմանված չլինելու դեպքում՝ տվյալ իրավահարաբերությունը կարգավորող իրավունքի ճյուղի սկզբունքներից:

Ամբողջացնելով վերը թվարկված իրավական նորմերը, դրանց և գործում առկա փաստերի համադրման արդյունքում՝ Բողոքներ քննող անձը հանգում է այն եզրակացության, որ Օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետով նախատեսված հիմքերն ի հայտ գալու օրվան հաջորդող հինգ աշխատանքային օրվա ընթացքում մասնակցի տվյալները՝ համապատասխան հիմքերով, լիազորված մարմնին ուղարկելը Պատվիրատուի պարտականությունն է, այն իմպերատիվ (պարտադիր) դրույթ է, որի պահպանմամբ է միայն հնարավոր փաստել իրավահարաբերության առաջացումը:

Հակառակ դեպքում Կարգի 45-րդ կետով սահմանված դրույթները չեն ծառայի իրենց նպատակին, այլակերպ մեկնաբանման դեպքում կհանգեցնեն որևէ ողջամիտ իրավական փաստարկով չհիմնավորվող մեկնաբանության՝ հաշվի չառնելով այն ընդունող մարմնի նպատակը, նորմում պարունակվող բառերի և արտահայտությունների տառացի նշանակությունը:

Այսպիսով, Բողոքներ քննող անձն արձանագրում է, որ հայտերի գնահատումը կայացել է 10.03.2021թ.-ից մինչև 16.03.2021թ.-ը ընկած ժամանակահատվածում, իսկ «Մեդիսար» ՍՊԸ-ի կողմից անհամապատասխանությունների շտկման վերաբերյալ գրությունը Հանձնաժողովին է ուղարկվել 15.03.2021թ.-ին ժամը 18:25-ին, որպիսի պայմաններում, Հանձնաժողովը Մասնակցի հայտի գնահատումը օբյեկտիվորեն կարող է շարունակել միայն կասեցման ժամկետի ավարտի և Մասնակցի կողմից համապատասխան գրության ստացման հաջորդող օրը՝ 16.03.2021թ.-ին, ինչը կատարվել է Հանձնաժողովի կողմից, որպիսի պայմաններում, Բողոքներ քննող անձը փաստում է, որ «Մեդիսար» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ընթացակարգ նախաձեռնելու հիմքերն ի հայտ են եկել 16.03.2021թ.-ին, իսկ համապատասխան հիմքերը Պատվիրատուն ուղարկել է ՀՀ ֆինանսների նախարարություն 23.03.2021թ.-ին՝ պահպանելով Կարգի 45-րդ կետով սահմանված ժամկետը:

Ինչ վերաբերում է Մասնակցի կողմից դիրքորոշմամբ նշված այն հանգամանքին, որ «Մեդիսար» ՍՊԸ-ն օրենքով սահմանված պարտավորությունների կատարման համար ձեռնարկել է իրենից կախված ողջամիտ ու բավարար միջոցներ՝ պարտավորությունների պատշաճ կատարման համար, որն իր կամքից անկախ հանգամանքներով պայմանավորված (թիվ ՍՀԱՄ-ՀՄԱԱՊՁԲ-21/2 ծածկագրով ընթացակարգի թիվ 2-րդ չափաբաժնի մասով Պատվիրատուի կողմից Օրենքի 13-րդ հոդվածի պարտադիր պահանջների խախտմամբ պայմանավորված), հնարավոր չի եղել հասցնել իրենց տրամաբանական ավարտին, ապա Բողոքներ քննող անձը փաստում է, որ Պատվիրատուի կողմից Օրենքի 13-րդ հոդվածով սահմանված պահանջների ենթադրյալ խախտումը չի կարող հիմք հանդիսանալ Մասնակցին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում չներառելուն, քանի որ «Մեդիսար» ՍՊԸ-ի կողմից թիվ 1.1 հավելվածով ներկայացված տեխնիկական բնութագրում առկա՝ Մասնակցի կողմից վիճելի համարվող անհամապատասխանություններից զատ, Հանձնաժողովի կողմից նաև արձանագրվել է, որ Մասնակցի կողմից 2-րդ չափաբաժնի մասով առաջարկվող ապրանքի ամբողջական նկարագրում (Հավելված 1.1) նշված չէ ապրանքային նշանը, ինչով պայմանավորված կասեցրել է գնահատման նիստը և առաջարկել է մինչև կասեցման ժամկետի ավարտը, այն է՝ 15.03.2021թ.-ը, շտկել արձանագրված անհամապատասխանությունը: Սակայն «Մեդիսար» ՍՊԸ-ն սահմանված ժամկետում չի շտկել վերոնշյալ անհամապատասխանությունը, այլ գրություն է ներկայացրել՝ հավաստիացնելով Պատվիրատուին իր կողմից ներկայացված ապրանքի համապատասխանության մասին, այնինչ՝ առնվազն պարտավոր էր թիվ 1.1 հավելվածում կատարել շտկում՝ նշելով ապրանքային նշանը, ինչի պահանջը նախատեսված է գնման ընթացակարգի հրավերով:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 50-րդ հոդվածի 7-րդ մասով՝ ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձը.

## Ո Ր Ո Շ Ե Ց

1. ՀՀ ֆինանսների նախարարության կողմից 30.03.2021թ.-ի թիվ 26/26-1/4633-2021 գրությամբ «Մեդիսար» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված թիվ ՍՑ-ԼՕ-2021/84 ծածկագրով ընթացակարգը բավարարել:

2. «Մեդիսար»ՍՊԸ-ին ընդգրկել գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում՝ 2 (երկու) տարի ժամկետով:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի ընդունած որոշումն ուժի մեջ է մտնում այն տեղեկագրում հրապարակելուն հաջորդող օրը:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի ընդունած որոշումն իրավապարտադիր է, որը կարող է փոփոխվել կամ վերացվել, այդ թվում՝ մասնակի, միայն դատարանի կողմից:

**ՀՀ ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ**
**ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՆՈՂ ԱՆՁ՝** **ԼԵՎՈՆ ՕՀԱՆՅԱՆ**